ՆՈՐ-ԴԱՐ

№ 112 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | Ուրբաթ 6 Յուլիսի | 1884 | Ուրբաթ 6 Յուլիսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 112.

Տարեկան 10 ռուբլի. վեց ամիսը՝ 6 ռուբլի. երեք ամիսը՝ 3 ռ. 50 կ. հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվումէն Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուներով։ Յայտարարութեան վճարը բառին 2 կ. ռէկլամների համար՝ կրկնապատիկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Այլ և այլք. — Մի կտոր մետաքսի պատմութիւնից։
Թղթակցութիւններ. — Երևանից։
Քաղաքական.—Լուրեր։
Հեռագիրներ. — Յայտարարութիւններ. — Բանասիրական.—Հարուստները զուարճանում են։

«Նոր-Դար»-ին բաժանորդ գրուել կարելի է կէս տարով՝ յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը։ ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ բաժանորդագինն է —6 ՌՈՒԲԼԻ։ Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція „Норъ-Даръ".

Խնդրում ենք հասցնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան—ապառիկ մնացած բաժանորդագները։

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը իւր նախկին բնակարանից տեղափոխուել է, փոքր ինչ ցածր՝ ԲԱԶԱՐՆԱՅԱ փողոց, իշխանուհի Էրիստովի տունը, № 20.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵՒԱՆԻՑ. Նորին սրբազնութիւն տեղւոյս առաջնորդը բարեհաճել է կազմել 5 հոգուց մի մասնաժողով, որ ստոյգ ու անսուտ տեղեկութիւններ ժողովի նահանգիս բոլոր եկեղեցեաց ու դպրոցաց դրութեանց ու կարգութեանց մասին, որպէս զի նորընտիր կաթողիկոսին հեշտ կերպով ներկայացնի Երևանի թեմն իւր բոլորամասնեայ պարագաներով. Գովելի գործ. Վատ չէր լինի եթէ մեր միւս առաջնորդներն էլ բարեհաճէին հետևել սրբազանին։

—

Նոյն տեղից. Մեզանում լուր է տարածուած որ սաստիկ աշխատում են պ. Պռօշեանի ձեռքից թեմ. վերատես. պաշտօնը կորզել մեր քաղաքի ինքնակոչ մանկավարժին տալու համար։

—

ԵՐԵՒԱՆԻՑ. Գայեանեան օր. դպրոցի տեսչուհի օր. Գայեանէ Յովհաննիսեան, որ պ. 3 տարի ծառայէր դպրոցին այս տարի երկու տարին լրացնելուց յետոյ թողել է դպրոցը։ Հրաժարուած են ուսուցիչներից պ. պ. Յակոբ Խոջամիրեան, Միքայէլ Տէր Մարտիրոսեան։ Մըտադիր են հրաժարուելու պ. պ. Հայկ Մատաթեան, Յովհաննէս Տէր Զաքարեան։ Վերջիններս բոլորովին ձրի էին դասախօսում երկու տարի շարունակ.

—

„Новости"-ին հաղորդում են, որ Կայսերական անկախ-տնտեսական ընկերութիւնում այժմս նախագիծ է մշակվում Անդրկովկասում շերամապահութեան մի օրինակելի գործարան հիմնելու, որովհետև նկատուած է, որ վերջին ժամանակները այդ երկրում շերամապահութիւնը ընկած է, տեղացիների շերամներին և թթենիներին վատ հոգատարութիւնից։ Այդ գործարանը կը հիմնուի այնպիսի մի կենդրոնում, ուր շերամապահութեան վերաբերեալ ապրանքներ ամենից հեշտ վաճառվեն։ Պ. Շօպէնի արած հետազօտութիւններին նայելով մի ժամանակ շերամապահութիւնը այդ երկրի հայերի մէջ շատ տարածուած է եղել, սակայն այժմս նա այնտեղ կատարեալ ընկած է և Երևանում տարեկան 10 փ. մետաքսից ոչ աւելի է արտադրվում. Փոքր դեր չի խաղում և բնակիչների մէջ տարածուած նախապաշարմունքը և մնասում գործին, որոնք ամէն մի անյաջողութիւն նախախնամութեան են վերագրում։ Առաջին աւրեշումի գործարանը Կովկասում շինեց ռուսական ընկերութիւնը 40-ական թուականներում, կառավարութիւնից օժանդակութիւն ստանալով։ Իսկ այժմս այդ գործարանը բոլորովին փակուել է։ Վերջերումս էլ Նուխիում հիմնուեցաւ Ալէքսէևի գործարանը, որը գոյութիւն ունի և այժմս էլ, բայց դադարեցրած է իւր գործողութիւնները։ Գործարանը բանում էր ժամանակ առ ժամանակ և 1872 թուին ծախուեցաւ Միրզոևին, որի ժամանակ գործարանը բանեցաւ մինչև 1877 թիւը և յետոյ բոլորովին փակուեցաւ։ Այժմս Ղարաբաղում 11 գործարաններ կան, որոնցից երեքը Շուշիումն է գտնվում (Անանովինը, Ներսէսովինը և Զաքարովինը), իսկ մնացեալները Շուշուց դուրս (Սարգիսովինը, Աճապնեանցինը և այլն)։ Վերջապէս Նուխիում կայ Գեանջուեցովի գործարանը, որը այժմս էլ բանում է։

—

ԱՂԲՈՒԼԱՂԻՑ գրում են. Վրաստանի և Իմէրէթի հայոց թեմի առաջնորդ Արիստակէս եպ՝ կոպոսը ամսոյս 18-ին ժամանեց Աղբուլաղ, ուր թիֆլիսցի պ. Շանշեանց նոյն սրբազնութեան հրաւիրեց իւր տունը։

Միւս օրը սրբազանը հանդիսով օրհնեց Աղբուլաղէ նորակառոյց եկեղեցու վէմ քարը և աւազանը, ապա մէկի քարոզով ներկայ եղողներին հասկացրեց ուսման նշանակութիւնը—առաջարկելով բանալ ուսումնարան։ Մինչդեռ սրբազանը ծառի հովում հանգստանում էր, հասարակութիւնը կազմեց „Հասարակաց վճիռ", որով պարտաւորվում էր իւրաքանչիւր տարի 100 րուբլի վճարել ուսումնարանին՝ բացի աշակերտաց թոշակադրամից և եկեղեցու մոմավաճառութեան արդիւնքից. ապա բնութիւն եղաւ հոգարարձուաց։ Ուրեմն՝ այսուհետև Աղբուլաղում ևս հայոց ուսումնարան կը լինի….։

Նոյն օրը սրբազանը ուղևորուեց դէպ Սամղէրէթ գիւղը, այնտեղից Շամշուլգայ, ուր տեղական քահանայից իրենց ծխերով միացրեց ու դրանով վերջ դրեց երկպառակութիւններին։ Շամշուլգայում մէկ գիշեր մնալով նա գնացՄեծ-Դաղէթ, ուր խրախուսելով ժողովրդին առաջարկեց ունենալ ուսումնարան. ժողովուրդը խոստացաւ տարեկան 200 րուբլի փող վճարել ուսումնարանին և կայացրեց „Հասարակաց վճիռ"։ Ուրեմն՝ Դաղէթը նոյնպէս այսուհետև ուսումնարան կունենայ….։

Այդ գիւղից սրբազանը անցաւ դէպի Դուռնուկ, որտեղից դէպի Բօլնիս, ուր նրան սպասում էր թեմ. վերատեսուչ պ. Աղայեանցը։

—

Ամսոյս 3-ին, երեկոյեան ժամի 10-ին, սնանկացած պ. Ս. Ն. գնում է Գօգլիօի մօտ Կուրն ընկնելու. մայրը և եղբայրը հասնում են ետևից և ազատում։

Այս դէպքը երկրորդ անգամն է։

—

Ընթերցողներին յայտնի պ. Կլեաչկօի Պալերմոյին գրած նամակի առթիւ, որի մէջ մատնացոյց է անում նաւթի վայ երևումինչօ խօկրայի դէմ, „Figaro" է .... (.... aux) յօդուածը։ Այդ յօդուածի հեղինակը հաստատում է, որ անցեալ տարի Սիրիայում նաւթ գործ է ածուել։ Բժշկութի աբեղաները փորձել են նաւթը և հաւատացնում են, որ ուլթից մինչև տասը կաթիլ նաւթը մի բաժակ ջրի հետ խառնած ազատից շատերին անխտրելի մահից։

—

Ամսոյս 4-ին, գիշերուայ ժամը երկուսին, Սիօնի փողոցում մի արջ է երևացել և անցուդարձ անողների վրայ յարձակուելով զանազան կողմեր հալածել է նրանց։

Տեղական ոստիկան կարգադրութեամբ արջին սպանել են, յայտնի չէ ումն է պատկանում արջը։ Շատ կարելի է, որ արջը անտառից ճանապարհած կամեցել է այցելել քաղաքին։

ՄԻ ԿՏՈՐ ՄԵՏԱՔՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

—

Շերամի որդի կեանքը. Նրա քնելն ու կաշու փոխելը, շաւ բարձրանալն ու բոժոժ շինելը։

—

Նախընթաց յօդուածում ասացինք թէ ինչպէս պէտք է սերմը բացանել և թէ ինչ խնամատարութիւններ են հարկաւոր որդին իւր ամբողջ կեանքի ըշջանում։ Այժմ մի թեթև ակնարկ ձգենք նրա վրայ սկսած այն օրից՝ երբ կոտրում է խաչխաչի հատիկի մեծութեամբ սերմի կեղևը և առաջին անգամ լոյս աշխարհ դուրս գալիս։

Նա չը նայելով իւր չափազանց փոքրութեան՝ տեսնում ես խկոյն սոդաց տերևի վրայ, տիրապետեց այդ փոքրիկ աշխարհը, կերաւ նրա կակուղ մասերը և անցաւ մէկին մէկալին։ Նա առանց դադարելու ուտում է մի օր, երկու օր, երեք օր և գզալի կերպով մեծանում։ Հինգ վեց օրից մեր որդի .... փոխեց. Նա էլ ոչինչ չէ ուտում, գլուխը ուռչում է ուղտի պէս դէպի վեր արձկում ու տեղը մնում անշարժ։ Անփորձ որդնապահը մի րոպէ կը կարծէ որ նա ձեռքից գնաց, բայց չէ, այդ ծրգ նաժամը շուտով անցնում է, 24 ժամից յետոյ տեսնում ես մեր որդը թափ տուեց գլուխը, մի քանի շարժումներ արեց, կրկին սոդաց տերևի վրայ և այժմ առաջուանից աւելի ախորժակով կրծում է տերևը տերևի ետևից։

Ինչ էր սպասահել նրան արդեօք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԶՈՒԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ.

—

Գիշերային Այցելուն.

—

Քաթօլիկների գերեզմանատան աջ կողմում, մի բաւական ընդարձակ զառիվայրի վերայ ընկած են մի երկու նեղ փողոցներ, մօտ հարիւրաչափ տըներով, որոնք շինուած են խիստ խառն ու անկարգ դրութեան մէջ։ ճարտարապետի կարգինը ոչինչ աշխատանք չէ կրել այս անորոշ թաղի համար։ Այդտեղ շինութիւնները կարծես բնութիւնը ինքն է բուսացրել առանց մարդկանց նեղութիւն պատճառելու։ Շատ տեղ նրանք ներկայացնում են բազմաթիւ խորշերի մի խառնուրդ։ Շատ տեղ էլ մէկի կտուրը կազմում է մի ուրիշի բակը. և երբեմն երրորդի դուռը մտնելու համար՝ ստիպուած ես անցնելու առաջինի պաշտգամով և երկրորդի խարխուլ սանդուխքներով։ Այդ տներից մի քանիսը կպած են զառիվայրի բարձր սպառուածի կուրծքին, և նմանում են աւելի անգղների բոյներին։

Այս փոքրիկ թաղի մէջ բնակվում են ամէն սեռի և տեսակի մարդիկներ։ Սկսած արհեստաւորներից, լուացարարներից, կարողուհիներից և վերջացած խաբեբայ գրքացներով, վհուկներով և անհաւակ կանանցով։ Սրանք բոլորը միմեանց ճանաչում են, ծանօթ են մինչև անգամ միմեանց մանրամասն կենսագրութեան։ Բայց դրսի թաղերից շատ քիչերն են իրենց ճանաչում։ Նա այն էլ մի մի որոշ արհեստների ծառայող անձինք, որոնք շարունակ յարաբերութիւն ունին իրանց հետ։ Երբեմն էլ այս թաղին գիշերով այցելում են հարուստ տներից զանազան երիտասարդ և պառաւ անձինք, իրենց ծանօթներին զանազան պատուէրներ տալու համար։

Երեկոյեան ութ ժամն էր։ Երկինքը թէպէտ պարզ և աստեղազարդ, բայց լուսինը դեռ ծածկուած էր հեռու լեռների ետևում և նրա շուտ ծագելուն յոյս չկար։ Այս ժամին, երբ Թիֆլիսի գլխաւոր փողոցներում դեռ մեծ կենդանութիւն է տիրում, այս թաղի մէջ լռութիւնը կատարեալ էր. միայն թէ այս ու այն բակում շների աննպատակ հաջոցը մերթ ընդ մերթ ընդհատում էր նրան։

Զառիվայրի կուրծքին կպած տներից մէկի նեղ բակում այս միջոցին անցուդարձ էր անում մի սև ստուեր. Նա երբեմն գալիս հասնում էր իւր բակի շարունակութիւնը կազմող հարևան տան կտուրի ծայրը և երկար արձանացած կանգնում էր այնտեղ, և երբեմն անցուդարձ անելուց յոգնելով նստում էր կտուրի ճակատին։ Իրենից մի փոքր հեռու, երկու փոքրիկ պատուհաններում երևում էր ճրագի նուաղ լոյս. դա ստուերի կացարանն էր։ Գիշերուայ այս խաւար ժամին ամենափորձ խուզարկուն անգամ չէր կարող գտնել այդ խորհրդաւոր բարձրութեան ճանապարհը։

Մի ընդարձակ և ուղղաձիգ փողոց, որի վրայ անընդհատ անցուդարձ էին անում կառքերը, կազմում էր զառիվայր թաղի ստորոտը։ Մեզ ծանօթ ստուերի դէմքը միշտ ուղղուած էին լինում դէպի այդ կողմը։ Ցանկարծ փողոցի ծայրում երևաց կարմիր լապտերներով մի կառք։ Ստուերը որ նըստած էր կտուրի ճակատին, իսկոյն բարձրացաւ տեղից և մի քանի արագ քայլեր փոխելով դէպի ներքև, անյայտացաւ խաւարի մէջ։ Կարմիր լապտերներով կառքը խուլ գղրգռելով, ինչպէս այդ յատուկ է հարուստների սեղհական կառքերին, յառաջանում է դէպի զառիվայրի թաղը։ Հասնելով մին բարձրութեան հանդէպը, ուր անց ու դարձ էր անում ստուերը, նա կանգնեց։

Կառքի միջից դուրս եկաւ մի բարձրահասակ երիտասարդ ծածկուած վերարկուի մէջ և հապճեպ քայլերով ուղղուեցաւ դէպի զառիվայրը հանող ճանապարհը։ Բայց նա հարիւր քայլ դեռ չէր հեռացել, երբ նրան հանդիպեց մի սևազգեստ կին, սա մեզ ծանօթ ստուերն էր։ Երիտասարդը ողջունեց նրան առանց ձեռք պարզելու։ Երևում էր որ կինը նոյնպէս ակնածութեամբ է վերաբերվում դէպի նրան, որովհետև խոնարհ գլուխ իջեցնելով միայն պատասխանեց երիտասարդի ողջունին։

—Ինչ պատահեց քեզ, որդի, այս քանի՛ օր է էլ քո Սալոմէին չես հարցնում, խօսեց սևազգեստ կինը, հետևելով երիտասարդին, որ բարձրանում էր դէպի զառիվայրը։

—Ես քեզ վերայ շատ եմ բարկացած, Սալոմէ, գիտէս թէ ոչ։

—Ի՞նձ վերայ, և ինչու համար, որդի, փախենալով հարցրեց նրան Սալոմէն։

—Տիկին Բէրնարի կարանոցում մի աղջիկ կայ, դու նրա մասին ինձ ոչինչ տեղեկութիւն չես տուել մինչև այսօր։

—Տիկին Բէրնարի՞… այդ կարանոցը ես…

—Այդ կարանոցը դու երևի չես էլ ճանաչում։

—Այո, որդի, ինչ թագցնեմ, չեմ ճանաչում։

—Ցիմար, թէ՞ ասում էիր ամբողջ Թիֆլիսը ճանաչում ես մինչև այսօր խաբում էիր ինձ։

—Ինչու այդպէս բան ես, ասում, որդի, ես քեզ ինչու համար պիտի խաբեմ. միթէ՞ ամբողջ Թիֆլիսում մի այնպիսի կորած անկիւն չի՛ պատահել, որը ես չճանաչեմ։

—Բէրնարի կարանոցը կորած անկիւն չէ, նա քաղաքի մէջ տեղումն է և ամենալաւ փողոցի վրայ։

—Հազար անգամ ներողութիւն եմ խնդրում։ Բայց ի՞նչ ես հրամայում, ասա որդիս, ես խկոյն կ՚կատարեմ։

—Վաղը ամէն բան վերջացած պէտք է լինի։

Այժմէն իսկ կարող ես վերջացած համարել, միայն պատմիր թէ բանը ինչումն է։ Մինչ այս նրանք հասել էին Սալոմէի տան բակը, մի շատ կարճ ճանապարհով։ Պառաւը հրաւիրեց երիտասարդին իւր կացարանը։ Սա մի փոքրիկ տնակ էր, բաղկացած երկու սենեակներից։ Նրանցից մէկը տանտիրուհու և հիւրանոցը և սեղանատունը և դահլիճը և ննջարանն էր, կահաւորած ամենահասարակ կարասիներով, որոնք աչքի էին ընկնում իրենց զանազանակերպ աններդաշնակութեամբ։ Նրա աջ կողմը գրաւած էր մի թախտ, ծածկուած թաղիքներով, իսկ նրանց վրայով փռուած էր մի կոշտ և կեղտոտ օթոց։ Պահարանի նման մի խորութեան մէջ վառվում էր կանթեղը, որի ծուռ կտրուած պատրոյգից յառաջացած ծուխը սևացրել էր պատկերի ամբողջ կէսը։ Հարևան սենեակը Սալոմէի խոհանոցը, մառանը և փայտատունն էր։ Նրա բաց դռներից փչում էր մի տեսակ

երբ այնպէս անշարժ ընկած էր 24 ժամ. հիւանդ էր միթէ։ Ամենեւին ոչ. Նա քնած էր, ինչպէս ասում են մեզանում, թէև քնելու վրայ կարելի է խօսք չէ էլ մտածել։ Այդ ինչ տեսակ քնել է, որ հինգ վեց օրը մի անգամ է պատահում, զուցէ շատերը հետաքրքրուին իմանալ։

Ահա ինչ տեսակ. որդի մարմինը ծածկուած է երկու տեսակ կաշիով, ներքինն՝ որ նրա կենդանական, պզտոյն մասն է և արտաքինն՝ որ հինգ վեց օրից մին փոխվում է, նրանցից մաշկվում հեռանում, ինչպէս օձի շապիկը։ Այդ արտաքին կաշին կամ աւելի ճիշտ ասած խ ո ր խ ը, որդի զարգանալուն հետ հաստանում է և իւր տակ սեղմում կաշկանդում որդին. ահա այդ միջոցին նա քնում թմրում է և էլ չէ կարողանում ուտել։ Այսպէս նա մնում է մինչև որ խորխի ու բուն կաշուի մէջ տեղը մի հեղուկ է պատում, որ պնդանալով մի նոր խորխ է կազմում. ահա այդ ժամանակ որդը քնից զարթնում է, գլուխը քսքսում տերևին և պոկում գլխի վրայ հին խորխը։ Հէնց որ դրանից ազատուեց թէ չէ, տեսնում ես առաջի ոտներով պինդ բռնեց տերևից ու մարմնի ետևի կողմից կըծկուեց օղակ օղակ դէպի գլուխը ու մի երկու քայլ առաջ անցաւ։ Ամեն անգամ այդպէս կծկուել պարզուելուց նա իւր ետեւն է թողնում խորխի մի մասը, իսկ ինքը առաջ անցնելով միջից բոլորովին դուրս գալիս աւելի զուարթ ու առոյգ տեսքով։

Ահա այդ խորխի փոխելն է որ ք ո ւ ն անունն են տալիս և որդի միամսեայ կեանքին մէջ չորս անգամ է պատահում։

Առաջին քնից յետոյ որդը մտնում է իւր կեանքի երկրորդ շրջանը և դարձեալ առաջուայ ձևով ուտում, քնում [illegible] Գալիս է երրորդ քունը, չորրորդը, որ մ ե ծ ք ո ւ ն են ասում և վերջապէս մտնում է հինգերորդ և վերջին շրջանը։

Իւրաքանչիւր շրջանի տևողութիւնը կախուած է օդի ջերմութիւնից ու կերակուրից. օրինակ 20 աստիճան (Ռ.) միջակ ջերմութեան մէջ և լաւ կերակրելով, ամեն մի շրջանը քաշում է 4—5 օր, այնպէս որ 20—26-րդ օրում նա արդէն չափս է բարձրանում, բոժոժ շինում, այն ինչ պակաս ջերմութեան մէջ 35—45 օր կարող է տևել։

Որդի շուտով բոժոժ շինելը մի կողմից թէև ազատում է մեզ նեղութիւնից, ծախքից, բայց միւս կողմիցն էլ այս վնասն ունի, որ որդը թոյլ բոժոժ է շինում հետևաբար և լաւ գին չէ կարող գնալ, ուստի միջին ճանապարհը պիտի ընտրել այն է՝ օրը չորս անգամ կերակուր տալ և 17 աստիճան ջերմութիւն պահպանել։

(Մենք մոռացանք նախորդ յօդուածում յիշել, որ որդի առաջին շրջանում տերևը կտրատած պիտի տալ. միայն սուր դանակով պիտի կտրել, որ չը փըչանայ, իսկ վերջին շրջաններում ընդհակառակն փոքրիկ ոստիկներով. բացի այս, տերևը քաղելուց յետոյ անմիջապէս պիտի չը տալ, այլ գոնէ 24 ժամ շտեմարանում պիտի փռել քամու տալ)։

Որդի հինգերորդ շրջանում, այն է չորրորդ քնից յետոյ մեր մըջնաչափ որդը մեծացել վերջնական երկարել է ու իւր կատարեալ գեղեցկութեանը հասել. այժմ աւելի պարզ երևում են նրա գլխի վրայ՝ ծնօտներն ու շրթունքները երկու կտրիճներով, փորի տակ՝ առջևից երեք զոյգ թաթեր և ապա չորս զոյգ կեղծ թաթեր, որ ուզած ժամանակ առանձին մկանունքներով քաշում փորին է կպցնում կամ թէ ձըգում երկարացնում, այդ ոտիկներից միայն կարելի է իմանալ թէ նա ինչ գոյն բոժոժ կը տայ, եթէ դեղին են՝ դեղին, եթէ սպիտակ՝ սպիտակ. որդը յետոյքին ունի նոյնպէս մի զոյգ կարճ թաթեր, որով ընդամենը լինում է ութը զոյգ։ Նա կողքերին ունի ինն զոյգ սև բծեր, որոնցով նա շունչ է քաշում, ինչպէս և ամբողջ մարմնով, որ ինն օղակներից է բաղկացած և վերջինի վրայ կայ մի եղջիւրաձև պոչիկ, որ յայտնի չէ թէ ինչ բանի է ծառայում։

Հինգերորդ շրջանի առաջին օրերում որդը չորս [illegible] աւելի է ուտում քան իւր բոլոր կերածները, նա այնպէս ագահաբար յարձակվում է տերևի վրայ ու խշխշալով ուտում, որ կարծում ես աշխարհը եթէ տերև դառնայ էլի հերիք չէ նրան։ Բայց երկար չէ քաշում նրա ախորժակը էլի կապվում է, կաշին բարակում ու շողշողում և ահա ութերորդ օրը, չորրորդ քնից յետոյ, մեր որդը դադարում է ուտելուց. բայց այս անգամ անշարժ չէ մնում, ինչպէս առաջ քնի ժամանակ, այլ գլուխը քաշ մի առանձին հոգսի մէջ պտտում է դէս ու դէն երբեմն դունչը բարձրացնում աջ ու ձախ, կասես ուզում լինի հասկացնել „դէհ իմ բարերարներ, որ ինձ կերակրեցիք, խնամեցիք այսքան ժամանակ, ինձ մի անկիւն շնորհեցէք, որ քաշուեմ իմ գերեզմանը պատրաստեմ, մի գերեզման՝ որ ինձանից յետոյ շատերի կենդանութեան աղբիւրը պիտի լինի“։

Ահա այդ միջոցին սրտի բաբախմամբ մտնում է որդնապահը, հրճուանքով աչքերը սևեռում իւր սանիկին ու նրա փոքրի չորս կողմը շ ա խ դ ն ո ւ մ։

Շախը կամ ցախը ոչ այլ ինչ է, եթէ ոչ շուարան ասուած բոյսի չոր ճախերը կամ թէ վանդակի (ղափազի) համար բանեցնում ճիպոտների թուփը կամ մի այլ ճախոտ բոյս, որ բերում սնդացնում են դարբկների չորս կողմը դէպի վեր ցցած կամ կամարի ձև տուած, բայց այնպէս որ տակի յետամնաց որդերը կարողանում են դեռ մի երկու օրով կերակրուել։ Եթէ յետամնաց որդերը շատ քիչ են և նուազ մեզ աւելորդ նեղութիւն չը տալու համար լաւ է դէն անել, քան պահել, իսկ եթէ շատ են կարելի է ուրիշ սենեակ փոխադրել և բոլորովին մաքրել աղբից որդնանոցը, երբ արդէն որդերը բոժոժ են շինում։

Շախի ամենալաւ տեսակը Դաւբիկի սխտորն է, որ կայանում է սրա մէջ, վեր է առած մի արշին երկարութեամբ ու կէս արշին կամ աւելի լայնութեամբ ու մատուկէս հաստութեամբ մի փայտէ շրջանակ. Դրա լայնութեամբ ձգուած են կէս մատ հաստութեամբ և մէկ մէկուց մատ ու կէս հեռաւորութեամբ քառանկիւնի ձողեր, իսկ միւս երեսից նոյն ձողերն են, նոյն հեռաւորութեամբ, միայն այնպէս դասաւորուած որ մէկ մէկու դիմաց չեն ընկնում, այլ մի երեսի երկու ձողերին միւս երեսից մի ձող է համապատասխանում, Այդպիսի երկու շախը թեք կտրելի ձևով դնում են դարբկի երկու կողմից, իսկ տակը շարունակում յետամնացներին կերակրելը։

Այս ձև շախը այն առաւելութիւնը ունի միւսներից, որ որդը շուտով յարմար տեղ է գտնում իրեն համար այդ ճախերի մէջ, դէս ու դէն չէ ընկնում լորձունքը թափում ի զուր տեղ, թէ բոժոժի քաղն է հեշտացնում և թէ թ ո մ փ ա լ *) չէ լինում մէջները. միայն թանգ նստելու պատճառաւ շատ քիչ է գործադրվում այս։

Շախը դնելուց յետոյ որդը բարձրանում է վրան, պտտում մի յարմար անկիւն, յետոյ ոտերը դիմհար տալիս ճախին ու գլուխը մօտեցնում այս ու այն ծեղին (չոփին) բերանից բարակ թել դուրս թողնում ու կպցնում նրանց, ոստայն կազմում։

Այդ թելը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի հեղուկ, որ գոյանում է նրա թ ե լ ա տ ո ւ ն ասուած պարկին մէջ և օդի ներգործութեան տակ ընկնելով՝ պընդանում թելի ձև առնում։

Որդը իւր առաջին ոստայնը ձգելուց յետոյ քաշվում է նրա վրայ և գլուխը անդադար վեր, վար, աջ, ձախ շըջեցնելով կամաց կամաց բոժոժ շինում։ Առաջին օրը մի վեց ժամուայ ընթացքում նա այնքան թել է փաթաթում իւր շուրջը, որ հազիւ է նշմարվում մէջը. երկրորդ օրը ձգում է վերջին հայեացքը լուսաւոր աշխարհի վրայ և փակվում իւր կամաւոր գերեզմանում։

Բայց դրանով դեռ չէ վերջանում իւր գործը, նա նիրսում կուչ եկած էլի աշխատում է ամբողջ օրը, պատերը լաւ ամրացնում, մինչև որ բոլորովին վերջանում է իւր թելատան հեղուկը, վերջանում և իւր կեանքի հինգերորդ շրջանը։

Թէ այնուհետև ինչ է լինում որդը, այդ կը տեսնենք առաջիկայ յօդուածում։

Գ. Կ. Մելիք-Շահնազարեանց

Մոնպելիէ, 29 յունիսի

*) Թոմփալ ասում են այն բոժոժին, որը երկու երեք որդ միասին են շինել։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, 26 յունիսի. Հայի համար մի ժամանակ եկեղեցին էր միակ մտածողութեան ու խօսակցութեան ասպարէզ. այժմ փառք Աստուծոյ ունինք և գալոց և ընկերութիւններ և թատրոնասէրներ և մամուլ և քաղաքային ինքնավարութիւն. Այնպէս որ թղթակիցն իրաւունք չունի գանգատելու թէ գրելու նիւթ չը կայ. Ինչ անենք թէ ամեն անգամ էլ միևնոյնը պիտի կրկնի, մի՞թէ մեր օրերը մենք միւսի կրկնութիւնը չեն։ Ներկայ սեզոնը դեռ վստահ կարող է ասել որ մենք ոչ թէ մի, այլ մի քանի քայլ առաջ ենք անցել։ Այնքան լուսաւորուած ենք որ կարող ենք եկեղեցին խսպառ մոռանալ, մեր նախապաշարուած պապերի սնոտիապաշտութեան կոծող համարելով այն։ Երևանում ունինք 6 եկեղեցի — 15-ից 2—3 արժանաւոր քահանաներով. այդ թուից էլ շատ ու շատ պակաս ժամասէր ծըխականներով։ Շատ սխալվում են և մեզանում հային կրօնական ազգ անուանելով. „այն վաղ էր որ էշը կաղ էր“։ Հիմայ կարելի է գրականապէս ասել, որ մեր եկեղեցիք պաշարել են մեզ հետաքրքրելուց. այժմ կան և մըռնումեն՝ իրենք իրենց և մի քանի տէրտէրների համար, միայն յուսոյ առկայծեալ նշոյլ ունենալով թէ վերստին վերականգնելու են, երբ քիչ շատ ճշմարիտ լուսաւորութիւնը լինի բաժին մեր երկտասարդների, երբ ուղիղ դաստիարակութիւնը տեղ բանի մեր ընտանիքներում ու դպրոցներում...

Եւ ճշմարիտ, ինչ են մեր նորահաս երիտասարդները, գիտութիւնները պրոգիմնազիական պատերից դէնը չեն անցնում. կրթութեան պակասութիւնը ամենքի ճոխ հարստութիւնը կազմում։ Չունին կրօնասիրութիւն, չունին բարձր ուսում, չունին ինքնասիրութիւն։ Չը կայ նրանց համար ոչինչ՝ սրբութիւն, ոչինչ իդէալ։ Պարապորդութիւնը, ձրիակերութիւնը, մեծախօսութիւնը, ամբարտաւան ինքնահաւանութիւնը, թուղթ խաղալու մոլութիւնը, հեշտասիրութիւնը, մեղկ պչրոտութիւնը ու շուայտութիւնը. ահա որանք են մեր քաղաքի երիտասարդների սիրածն ու փայփայածը, դրամունքն ու մտածմունքը, հաւատոյ հանգանակը և իդէալները։ Մատով կարելի է հաշուել այնպիսիներին, որոնք իրենց ներկայով ապագայում հասարակական լաւ և յուսալի գործիչներ լինելու յատկութիւններն ու նշաններն ունին։

Անարդարութիւն էլ կը լինէր պահանջել այն, ինչ որ տեսած չեն իրենց շուրջը. Ինչ են մեր գործիչները թէ ինչ լինին նրանց յաջորդողները։ Մեր հասարակական կեանքն է այդպէս կազմակերպուած։ Քաղաքային ինքնավարութիւն ունինք, որ մեր գործիչները քաղաքային խ ա ղ կ ա ր ո ւ թ ի ւ ն են դարձրել։ Տէր Աստուած, տէր Աստուած, ինչ ինտրիգաներ, ինչ խայտառակութիւններ առես որ չը հա-

---

սառն խոնաւութիւն, որը միանալով կանթեղից առաջացած ծուխի հետ, լցրել էր սենեակը մի անախորժ գարշահոտութեամբ։

Այսուամենայնիւ երիտասարդը առանց ոչինչ զզուանք զգալու մտաւ այդտեղ և անցնելով նստաւ թախտի պատուաւոր տեղում, այսինքն այնտեղ, ուր դրուած էր հին թաշկապատ մութաքը։ Նրա շարժուածքից երևում էր, որ առաջին անգամը չէ այցելում այս տնակին։

—Հա, տիկին Բերնարի կարանոցը գտնվում է Ս...փողոցի վրայ, շարունակեց երիտասարդը ընդհատուած խօսակցութիւնը։ Այդտեղ մի աղջիկ կայ Ելենա անունով. բարձրահասակ, գեղեցիկ դէմքով, սև և գրաւիչ աչքերով, միով բանիւ բոլոր կարողուհիների մէջ նա ամենից գեղեցիկն է։ Երէկ ես նրան պատահեցի այգիում իւր ընկերուհիների հետ զբօսնելիս։ Յետոյ աւելի մօտիկից զննելու համար անձամբ մօտ տիկին Բերնարի մօտ և նրան գլխամոր կէս դիւժին շապիկներ պատուիրեցի։

Այդ առիթով ես մօտեցայ և այդ աղջկանը. Նա հայուհի է. մի քառորդ ժամու չափ խօսեցի նրա հետ. Նա ինձ կախարդեց. ես հիացած եմ նրանով. Հասկանում ես, ես հիացած եմ…

—Հասկանում եմ, որդի, հասկանում եմ, բոլոր աղջիկները առաջին անգամ քեզ հիացնում են…

—Ա՛յ, որ ոչինչ չես հասկանում, ընդհատեց Սալոմէին երիտասարդը. Նա բոլորովին ուրիշ աղջիկ է, ես մինչև անգամ նրան սիրեցի. Հասկանո՞ւմ ես…

—Հասկանում եմ, որդի, հասկանում եմ, ամենախոնարհ ձայնով պատասխանեց Սալոմէն։

—Այդպէս. Նա շատ սիրուն աղջիկ է. ես մինչև անգամ լաւ տեղեկացայ թէ նա ո՞վ է և ո՞րտեղացի է։

—Միթէ Թիֆլիսցի չէ։

—Ոչ, նա գաւառական քաղաքներից է։

—Օ՜ օ, ասա կանչէ, էլի, բաս բանը շատ դժուար պիտի գլուխ գայ, յուսահատաբար խօսեց Սալոմէն և շարժեց գլուխը։

—Դժուար մժուար չը գիտեմ։ Այսօր հինգշաբաթի է, և կիւրակէ օրը նա իմ առանձնարանում պիտի լինի, որովհետև ես խոստացել եմ մեր Մարգարին, որ այդ օրը Ելենայի հետ միասին ճաշ տամ նրան այնտեղ։

Պառաւը մի փոքր ժամանակ մնաց լուռ, և աչքերը սևեռեց գետնին։ Երևում էր, որ նա մի մեծ արգելք է նկատում իւր ճանապարհի վրայ. Նա հետզհետէ ընկղմում էր մտածողութեան մէջ։

—Սալոմէ՛, ինչ ես լռել, քնո՞ւմ ես, գոչեց յանկարծ երիտասարդը այնպիսի ձայնով որ պառաւը վեր թռաւ։

—Չեմ քնում, որդի, մտածում եմ։

—Ինչ ես մտածում. քեզ խօսք եմ ասում. կիւրակէ օրը Ելենան իմ առանձնարանում պիտի լինի։

—Լսեցի, որդի, լսեցի։

—Լսելը բաւական չէ. դու ինձ ասա, խոստանո՞ւմ ես որ նրան կը բերես ինձ մօտ։

—Մի փոքր համբերութիւն ունեցիր, որդի, առաջ մի տեսնեմ ինչ աղջիկ է, ասում ես թէ Թիֆլիսցի չէ, կարելի է ծնողները չեն համաձայնում, այն ժամանակ շատ դժուար…

—Լռիր, լռիր, ընդհատեց Սալոմէին երիտասարդը. ես քեզ ասել եմ որ ինձ մօտ այդպէս բաներ չը խօսես. „չեմ կարող կամ դժուար է“ բառերը ինձ մօտ բերանիցդ չը հանես, հասկացա՞ր. կիւրակէ օրը նա ինձ մօտ պիտի լինի։

Այս ասելով երիտասարդը բարկացած վերկացաւ տեղից։

—Ինչո՞ւ ես բարկանում, որդիս, եթէ այդ է քո ցանկութիւնը, ինչպէս կարող եմ հակառակել, հեզութեամբ պատասխանեց պառաւը. միամիտ եղիր, կերթամ, կաշխատեմ և չեմ ուտիլ, չեմ քնիլ, մինչև չը կատարեմ քո ցանկութիւնը, Սալոմէի համար այդ խօ առաջինը չէ։

—Ա՛յ այդպէս պէտք է խօսես, Սալոմէ. այն ժամանակ ես քեզանից շնորհակալ կը լինեմ. աշխատիր որ երբեք ինձ չը բարկացնես. դու խօ գիտես իմ ինչ բնութիւն ունիմ։

Այս ասելով երիտասարդը հանեց գրպանից իւր պորտմօնէն և մի քանի թղթադրամներ պառաւի ձեռքը խոթելով դուրս գնաց սենեակից։

Սալոմէն դարձեալ նոյն ճանապարհով ուղեկցեց նրան մինչև կառքը։

—„Կիւրակէ օրը, չը մոռանաս“ կըրկին յիշեցրեց նա պառաւին իւր պատուէրը և կառքը նստելով հեռացաւ։

Ընթերցողները ճանաչեցին, ի հարկէ, որ այս երիտասարդը Սամուէլն էր, որին նրանք տեսել էին Ալէքսանդրեան այգիում Բերնարի կարողուհիների ետևից դեգերելու ժամանակ։

Սալոմէն վերադարձաւ իւր բնակարանը։

—

ԳԻՐԲԱՅ ՍԱԼՈՄԷՆ.

Մեր ծանօթ Սալոմէի արտաքին կերպարանքը հակակրական չէր, ինչպէս այդ յատուկ է այս քաղաքի պառաւներից շատերին։ Նա կարճահասակ էր. գլորիկ և քաղցր երեսով. միշտ ժպտող բերանով։ Նրա աչքերը թէպէտ պառաւութիւնից կկոցուած, բայց դեռ պահել էին իրենց մէջ վաղեմի գեղեցկութեան հետքերը. խորշոմները դեռ բոլորովին չէին գրաւել նրա այտերը, որոնց վրայ միշտ փայլում էր մի գունատ կարմրութիւն։

Նրա հայեացքը երբեմն քաղցր էր և պարզ, և երբեմն սուր և խորհրդաւոր։ Սալոմէն թէպէտ սիրում էր շատախօսել, բայց նա՜ իւր գաղտնիքներից ոչինչ չէր յայտնում իւր մերձաւորներին, իսկ գաղտնիքներ նա շատ ունէր։ Եւ այդ գաղտնիքների սկիզբը դրուեցաւ այն օրից, երբ իւր հանգուցեալ ամուսին դերձակ Սանդրօն գինու տիկճուրը մի ձեռքում և խորովածի շամփուրը միւսում քարափից ներքև գլորուեցաւ և խեղդուեցաւ Քռի մէջ։ Հանգուցեալի համփոնները ասում էին, որ երբ Սանդրօն արբած լինելով գինու տիկճուրը և խորովածը ձեռքին կամեցել է պարել քարափի ծայրին, բայց չը կարողանալով պահել իրան, սահել է և գինու ու խորովածի հետ միասին գլորուել Քռի մէջ։ Իսկ Սալոմէն ի հարկէ չէր հաւատում Սանդրոյի համփոնների պատմութեան. որովհետև իւր ամուսնու խեղդուած գիշերը Սուրբ Ծերանաւորը երևացել էր նրան և ասել որ Սանդրօին ինքն է տարել իւր մօտ որ Սուրբերի համար շորեր կարի։ Իսկ դրա փոխարէն Սուրբ Ծերանաւորը տուել էր Սալոմէին մարգարէութեան շնորհք, որով նա կարող էր բոլոր երիտասարդների և աղջկերանց գաղտնիքները հասկանալ, նրանց ապագան գուշակել, Աստուծոյ բարկութիւնը մարդկանցից հեռացնել և այլն և այլն։

Հարկ չը կայ ասել որ Սանդրօի մահից յետոյ Սալոմէն քաղցից կը մեռնէր, եթէ Սուրբ Ծերանաւորը նրան մարգարէութեան այդ շնորհքը չը

նեցին, ինչ թակարդներ չը սարքեցին, ինչ դարաններ չը գործեցին որ իրենց ասած, իրենց կողմնակից մարդուն քաղաքի ներկայացուցիչ ընտրել տան, քաղաքագլուխ ընտրելու նպատակով. 5—6 անգամ ընտրեցին, 5—6 անգամն էլ քանդեցին. դժգնու խաղ էր դարձել մի խօսքով։ Վերջապէս հազիւ ուրեմն ընտրութիւնները վերջացան. անձնական կրքերն ու թշնամանքներն պաշտ մի լռեցին։ Քաղաքագլխութեան 6 թեկնածուներից Ղահրաման աղա Մելիք Աղամալեան մերժեց քաղաքացոց խնդիրը, հրաժարուելով այդ պաշտօնի հրաւէրից. Նախկին քաղաքագլուխ Յովհաննէս Ղորղանեան և երդուեալ հաւատարմատար Վարդան Եղիազարեան խպառ հրաժարուեցին քուէարկուելուց. մնացածներից վերջապէս ընտրուեց Վասիլ Գեղամեան։ Վարչութեան անդամ ընտրեցին Միքայէլ Բունիաթեանցին, որ մինչև օրս դեռ չէ ընդունած իւր պաշտօնը հիւանդկոտութեան պատճառով։ Այս կատաղի կողմնակցութիւնների հարուածն եղաւ միայն խորհրդարանի քարտուղար Յովհաննէս Աթանասեանի (Հեթում) գլխին, որովհետև քաջութիւն էր ունեցել ճշմարտութեան պաշտպան հանդիսանալ „Նոր-Դար“-ի մէջ. իսկ այդ բանը բնաւ դուր չէր եկել Երևան քաղաքի հասարակական գործերի ինքնակոչ բռնապետների խմբին, որի նշանաբանն է կարծես՝ կեղծ և սուտ, պառակտումն և բաժանումն, սապալմունք և աւերումն։ Համարձակ կարելի է ասել, քանի որ այդ խումբը գոյութիւն ունի, հէչ հուսալու բան չէ որ մեր քաղաքի գործերը դէպի բարին և օգտաւէտն ընթանան։ Իսկ փառք ու պատիւ հին քաղաքագլխին, որ հակառակ այդ հրոսակի լարած բոլոր մեքենայագործութեանց՝ վեց տարի շարունակ մարտնչելով՝ իւր կարողացածին չափ պաշտպանեց քաղաքի շահերը, թոյլ չը տալով որ ընկնին դրանք այդ չար խմբի ձանկերը։ Եւ այս է միակ պատճառը որ այնքան վատաբանիչ ու զրպարտական խղճաթերթանքներ թափեցին պ. Ղորղանեանցի գլխին թէ քաղաքում պանդուխն քուէջուպուճախներում իրենց ձեռքի զէնք ոչխարամիտ մարդոց բերանով և թէ լրագրներում իրենց վարձկան ու ազգական նոր ու հին այրերի կոքի վաճառուած գրչով։ Աթանասեանցի տեղ խորհրդարանի քարտուղար ընտրուեց Աղեքսանդր Մ.—Փարսադանեան. ցանկանք որ իւր նախորդի օրինակն աչքի առաջ ունենալով աշխատի լինել անգոյն կամ ամենագոյն։

Երկին սեռի դպրոցներն ունինք—աննախանձ վիճակի մէջ են. յառաջ գնալու տեղ չեն գնում։ Գայիանեան ու Սահականուշեան օրիորդաց հայոց դպրոցները միասին ունին ընդամենը 125 աշակերտուհի. (առաջ այդքանը միայն Գայիանեանում կար)։ Այս տարի այցելող հասարակութիւնը սաստիկ դժգոհ մնաց հարցաքննութիւնից, մանաւանդ մի քանի առարկաներից, բացառած Յ. Խոջամիրեանի առարկները։ Ձեռագործութիւնն ու երաժշտութիւնը—իբրև հոգին ու ճաշակները փափկացընող ու նրբակերտող առարկաներ—հալածուած են դպրոցներից։ Ծիծաղելի էր տեսնել, երբ յունիսի 9-ին, Գայիանեան դպրոցի ակտի կատարման օրը, Սրբազանի քարոզից յետոյ, հոգաբարձուներից ա մ ե ն ա մ ե ծ գ ո ր ծ ո ղ ը գլխելով տեսչուհուն առաջարկեց մի երգ ասել տալ աշակերտուհեաց։ Տեսչուհին պարզօրէն պատասխանեց.—երգ չը գիտեն։ Արժէր տեսնել հոգաբարձուի դէմքի կնճիռների մակընթացութիւնն ու տեղատուութիւնը։ Դաստիարակութեան մասին էլ խօսք չը կայ. կատարեալ եւրոպական է։ Աշակերտուհիք զարմանալի արիաջանութեամբ իւրացրած են կեղծանալ ծածկոտութիւն, մեծասիրտ քնքուշկոտութիւն, ինքնասէր պահանջողութիւն, կծու սրախօսելու ձգտումն... Բայց որքան անսագ են երևանցու աղջկանը, Աստուած իմ։ Կասկած չըկայ որ այդպիսիներին աւելորդ է ձեռագործութիւնը։ Մինչև Երբ հայ աղջիկը տան տիկնացու պատրաստել. ժամանակ է հնութեան փոշին թոթափելու։ Պահանջները փոխուած են, պէտք է որ հայ կավալերներին համար հայ դամաներ լինեն.. հա հա հա՜։ Ի՞նչ եւրոպականութիւն։ Այս բանում երևանցիք պէտք է յաւիտեան երախտապարտ մնան դպրոցների տեսչին։ Նա չէր կարող այլապէս վարուել քանի որ լուացել է փափկութեան մէջ, ծնուել է թաւշի ու մետաքսի մէջ, աճել մեծացել է քնքուշ և նուրբ բատաւերի, գահաւորակների վրայ մեծատան բոլոր ճոխութեամբ ու փափուկ յարմարութեամբ շատացած. Եւրոպայի գլխաւոր քաղաքները տեսած-այցելած, նրբին, գեղեցկին, սիրունին, հրաշալուն, փայլին, գեղին, շողին սիրահարած-դարձել է հայրենիք, և այդ գեղարուեստական ձգտումները կոպիտ դաւառացի հայի սրտներում ևս արմատաւորելու գովելի նպատակով թողել է տուն, տեղ, փափկութիւն և յարմարութիւն և դպրոցական գործը-դաստիարակութիւնն իրեն սիրելի արհեստ և պարապմունք է ընտրել։ Դպրոցների հոգաբարձուներն էլ ամեն լիազօրութիւն, ամեն իրաւունք տուել են նրան։ Մինչև անգամ որպէս զի ոչինչով արգելք չը լինեն նրա գործին, տարուայ ընթացքում ոչ ոք 16 հոգաբարձուներից և ոչ մի անգամ դպրոց չէ մտել—դպրոցը չեն մտածել հոգացել։ Տարուայ ընթացքում ութ ինը ուսուցիչ են արձակվում, նորերն ընդունվում. ո՞վ է հարցնողը։ Ամբողջ տարին կարօտ են մնում ուսուցիչները ամսականները կարգին ստանալուն. ստանում են 1, 2, 3 մանէթնիով իբրև ողորմութիւն. շատ անգամ 2—3 ամսով կոպէկի երես չեն տեսնում։ Ո՞վ է հարցնում թէ ցաւ, դարդ ունի ուսուցիչը, հաց, սնունդ է պէտք նրան, ընտանիք ունի, որդիք ունի, պետոյքներ կան հոգալու, միայն թէ խիստ պահանջող են որ անպատճառ ճշտութեամբ տայ իւր դասերը, որ անպատճառ կոկ ու մաքուր հագնուած սանրուած լ[...]...

Ճշմարիտ ա՛յ ինչ բան է։ Օտար մարդիկ, ընդամէ՜նը հայ տէր, փող չունին. տան քէհը մի կողմից են ուզում, խանութատէրերն ապառիկներն են պահանջում, տունն իրենն է ուզում. փող չը կայ ու չը կայ։ Ուր կամիս գնայ տուող չը կայ։ Որ հոգաբարձուին կամիս՝ գտնել, տները գնայ, քանի անգամ կ՚ուզես դռները բաղխիր. չա՜տ չա՜տ մի քանի հատ չաղ ու լեղիկ „աղէն տանը չի“ խօսքերը կը տան ձեռքդ ու բարև եկար. այդ է, կուզես դրանով պարտքերդ տուր, կուզես ինքդ ապրիր, չես ուզիլ ապագայիդ ապահովելու դրամագլխի վրայ բարձիր։ Հարցաքննութիւնները վերջանում են. փող են ուզում. անցած ապրիլ, մայիս ամիսներ ի ռոճիկներն են խնդրում.—հոգին սուրբ ձեզ կերակրէ պատասխանում են սառը կերպով։ Մինչև անգամ հոգաբարձուներից մի բարեկիրթը շատ զարմացած ուսուցիչների պահանջողութիւններից — մի քանիսին ներկայութեամբ բարեհաճում է հրապարակում-դբօսավայրում հայր ու մայր հայհոյել դրանց յետևից ամենագռեհիկ բառերով։ Թող սրանից եզրակացնի ընթերցողը թէ ինչ վարք ու բարքի, խիղճ ու մարդկութեան տէր մարդիկ են Երևանի իգական սեռի կրթութեան գործի գլխին կանգնածները...։ Յաւելով կնքենք խօսքներս. եթէ երևանցիք անտարբեր մնան դէպի իրերի ներկայ դրութիւնը, շուտով կը կարդան „հոգոցն հանգուցելոց“-ն իրենց դպրոցաց վրայ։

Թեմական հայոց հոգևոր դպրանոցի մէջ ևս տարաձայնութիւններ կան տեսչի, ուսուցիչների և հոգաբարձուաց մէջ։ Այս տարի հարցաքննութիւնների արդիւնքը այստեղ տալ ևս դոհացուցիչ չեն եղած։ Վերաբերում են այն ձախող հանգամանքին, որ ուսուցիչները չափազանց ծանրաբեռնուած են եղել դասերով. մինչև անգամ 6-րդ դասեր ևս են ունեցել։ Պատճառ՝ ուսուցիչներից Ղազարեանի մեռնելով՝ հոգաբարձութիւնը վճիռ է կայացնում հանգուցեալի դասերը և ռոճիկը բաժանել ուսուցիչների մէջ մինչև նոր ուսուցիչ վարձելը։ Այս լինում է ներկայ ուսումնական տարուայ համարեայ սկզբներում։ Միևնոյն ժամանակի յանձնում են պ. Բէգնազարեանցին հոգալ ուսուցիչ վարձելու համար։ Դպրանոցի տեսուչ մանկավարժ պ. Ս. Բէգնազարեան առաւել քսակայարմար է համարում ուսուցիչ վարձելը մի կողմ թողնել։ Հանգուցեալ Ղազարեանի դասերը ոչ միայն ուսուցչաց, այլ նաև իւր վրայ ևս է բաժանում և իւր վերցրած իւրաքանչիւր դասը 3 րուբլ է գնահատում, իսկ ուսուցիչներին 1—2 ր. է տալիս դասին։ Տեսա՞ք, որքան բարեխղճութիւն է մեր տեսչի կողմից։ Այս ամենը լինում է առանց հոգաբարձուների գիտութեան։ Այսպէս մեր բարեհոգի և քաջ տեսուչը տեսչութեան հետ միասին առանդել է և շաբաթական 20 դաս. ուսուցիչները, բացի 6-րդ դասերից, վարել են նաև վերակացուի պաշտօն։ Ագահութիւնը Երբ չի պատժուել։ Հոգաբարձուք վերջապէս գլխի են ընկնում։ Հետաքրքրութիւնը լոյս է հանում ուրիշ սխրագործութիւններ։ Փաստերը համոզում են հոգաբարձուներին, որ Բէգնազարեան եթէ մինչև այսօր տեսուչ է, դրանով պարտական է իւր ազգականներին բացառապէս։ Պ. Բէգնազարեան անցեալ տարի օգուտ քաղելով հոգաբարձուաց անփորձութիւնից (նոր էին ընտրուել), շարպում է 3 տարով պայման կապել.—„չը լինէր այս պայմանաթուղթը, այժմ գուցէ անպատճառ բարի ճանապարհ մաղթած լինէինք“ —ասում էր հոգաբարձուներից մէկը։ Գործերի դրութիւնը դեռ շփոթուած է։ Ցանկանք որ ելքը ի նպաստ դպրանոցի լինի. բաւական էր որքան դպրանոցի շահերը զոհուեցին ազգականցական ու բարեկամական յարաբերութեանց։ Հոգևոր Դպրանոցի նիւթականը շատ բարեխղճաբար են հոգած հոգաբարձուք։ Պատիւ իրենց։ Մեր եկեղեցիների երեսփոխանական հաշիւներն էլ շատ պարզ ու մաքուր դրութեան մէջ են. այս մասին ևս պէտք է շնորհակալ լինել դպրանոցի հոգաբարձուներից, մանաւանդ պ. Պօղոս Պօղոսեանից, որովհետև շատ բարեխղճութեամբ են կատարած նաև քաղաքիս բոլոր եկեղեցեաց երեսփոխանների հաշիւները ըստուգատեսնելու պարտականութիւնները։

Երևանը հարուստ էր և ընկերութիւններով. բացուած էր Կով. Հ. Բ. ընկ. ճիւղը. բաւական անդամներ կային ստորագրուած, փողեր ժողովուած, վարչութեան նախագահ, անդամներ ու քարտուղար ընտրուած և աւելի ոչինչ։ Պատմութիւնը այլ ևս շարունակելու իրաւունք չըկայ, բոլոր գործերն իրենց գործավարներով հանդերձ փականքի տակ են... կար և կայ հայ տիկնանց բարեգործական ընկերութիւն իւր հաստատուած օրէնքներով։ Սակայն մարդ չը գիտէ թէ ինչ են շինել և ինչ բանի են այժմ։ Միայն այսքանը ճշմարիտ է, որ ընկերութեան նպատակն էր նպաստել իգական դպրոցներում ձեռագործի ծաղկմանը, բայց ընդհակառակն այժմ արտաքսուած է դպրոցից ձեռագործութիւնը։

Ունենք յարմարաւոր թատրոն, թատրոնասէրների խումբեր էլ փառք Աստուծոյ-ինչքա՜ն կամենաք, միայն Գ. դպր. հոգաբարձուք բոլոր տարին սաստիկ զբաղուած լինելով անհետաձգելի գէշի ծերով, ամենևին միջոց չեն ունեցել թատրոնասէրների հետ խօսելու։ Տեսչի համաձայնութիւնն ու բարեհաճութիւնն էլ ստանալու համար վերջիններս զուրկ են եղած եւրոպական փափուկ ձևի քաղաքավարութիւնից... որից եզրակացնելով թէ այդպէս անշնորհ էլ կը լինեն բեմի վրայ—բաց են սեւել թատրոնը, ասելով որ վախում ենք վ ա յ ր ձ գ է ք բ ե մ ի վ ա ր կ ն

տարի։

Եւ այսպէս տաս տարի առաջ Հաւլաբարում „Դերձակ Սանդրօի կին“ անունով յայտնի Սալօմէն՝ մի գեղեցիկ օր երեւցաւ մեզ յայտնի թաղում „Գերաց Սալօմէ“ անունով և ամսական երկու բուբլով վարձեց այն տունը, ուր մէջ մինչև այսօր էլ ապրում է նա։

Հետզհետէ նրա մօտ սկսան յաճախել իրենց ապագայի հետ ծանօթանալ ցանկացող կանայք և աղջիկներ։ Սալօմէն շատ ճշդութեամբ գուշակում էր նրանց սրտի ցանկութիւնները, ցաւերը, հոգեկան վշտերը և զարմանալի մարգարէութիւններ էր անում նրանց ապագայի համար, որոնք միշտ կատարվում էին։

Այսպէս օրինակ մի մանկամարդ կին յայտնում էր նրան որ ինքը սիրում է այս ինչ երիտասարդին, բայց ամաչում է իւր սէրը յայտնել նրան. ուստի խնդրում էր Սալօմէին, որ փալին նայէ ու տեսնէ, արդեօք յոյս կա՞յ որ այդ երիտասարդն էլ իրեն սիրէ։

Սալօմէն խոկոյն շարում էր իւր թըղթերը զանազան ուղղութեամբ, երկար նայում էր նրանց վրայ, ապա զատում էր նրանցից մի քանիսը, կրկին խառնում էր, կրկին շարում, և յետոյ սկսում էր իւր գուշակութիւնները։—„Այդ երիտասարդը երեք օրից յետոյ առանձին քեզ նամակ կգրէ, կյայտնէ քեզ իւր սէրը, մի տեղ կը նշանակէ, ուր դուք իրար հետ կը տեսնուէք և այս կսկսէք ձեր բարեկամութիւնը...“։ Եւ իրաւ երեք օրից յետոյ մանկամարդ կինը ստանում էր իւր սիրած երիտասարդից առանձին նամակ, նրանք տեսնվում էին իրար հետ և սկսում էին իրենց երջանիկ բարեկամութիւնը . . . ։

Ինչպէ՞ս էր պատահում այդ հրաշքը՞—ոչ. ամենապարզ եղանակով։ Սալօմէն մանկամարդ տիկնոջ գաղտնիքը իմանալուց յետ՝ անձամբ տեսնվում էր երիտասարդի հետ, յայտնում էր նրան տիկնոջ խօսածները և գործը կարգադրում էր այնպէս, ինչպէս ինքն էր գուշակել։ Հարկ չկայ ասել որ երիտասարդն էլ իւր կողմից մեծ հաճութեամբ կատարում էր Սալօմէի պատուէրը թէ նրա գուշակութիւնը սուտ չհանելու և թէ իւր բաղդը լիովին վայելելու համար։ Իսկ Սալօմէն պարզ է որ երկու կողմից էլ առատ վարձատրութիւն էր ստանում։

Այսպիսի հրաշագործութիւններով քիչ ժամանակի մէջ նա այնպիսի հռչակ ստացաւ, որ քաղաքի ամեն անկիւններից կանայք, աղջիկներ և նախապաշարեալ մարդիկ բազմութեամբ դիմում էին նրա մօտ իրենց ցաւերին դեղ ու դարման անելու համար. իսկ աւելի բարձր ընտանիքները նրան պատուով հրաւիրում էին իրենց տունը, և ամենայն տեղ էլ առատ վարձատրութեամբ վարձատրում նրան։

Նախապաշարմունքը, կախարդութեան և հմայութեան հաւատալը՝ միայն աղքատ և տգէտ կանանց բաժինը չէ. մեր մէջ այդ ախտով տոգորուած են նոյն իսկ զարգացածները, դպրոցներ և վարժարաններ աւարտած կանայք, արիստոկրատ տիկնայք և մեծանուն օրիորդներ։ Փիլիսոփայական խորհրդածութիւններ կարդացող և հասկացող աղջիկը նոյնչափ հաւատով և հաճութեամբ է նայում գրբացութեանը, հմայական հռութններին և այլ կախարդական խաբէութիւններին, որչափ հաւլաբարցի մի տգէտ կալատօզի աղջիկը։ Պարզ է ուրեմն, որ Սալօմէի նման մի խաբեբայ պառաւը մեծ ժողովրդականութիւն պիտի վաստակէր այս քաղաքի մէջ։ Բայց այդ դեռ բոլորը չէ։

Սալօմէն իւր այդ արհեստի շնորհիւ հետզհետէ ծանօթանալով քաղաքի ամեն անկիւնների հետ, իւր համար մի նոր եկամուտ աղբիւր էլ հնարեց, այն է—գտնել հարուստ և շռայլող երիտասարդների համար զ ո ւ ա ր ճ ո ւ թ ե ա ն նորանոր առարկաներ, այսինքն՝ բարեկամուհիներ, սարփածուհիներ... Նա այնքան հնարագէտ և ճարպիկ էր, որ այդ տեսակ գործերից ամենադժուարին անգամ աներկիւղ ձեռնարկում էր և յաջողութեամբ գլուխ հանում։ Իւր արհեստը այդ բանում օգնում էր նրան։ Ծանօթ լինելով ամեն տեսակ ընտանիքների հետ, նա իւր առաջ փակ դուռ չունէր։ Նա թափանցում էր անմատչելի գաղտնարաններ, մտնում էր սիրտերով և տագնապով շրջապատած հարսի առանձնարանը, խօսակցում էր հօր բռնութեան տակ ապրող աղջկայ հետ, յիմարացնում էր հարուստ և աղքատ—բայց միշտ գեղեցիկ—այրիներին, խաբում էր չքաւոր մայրերին և հրապուրում թեթեւսոլիկ աղջիկներին . . .

Ահա այսպիսի մի ծառայութեան համար էլ նա ծանօթացաւ քաղաքի մի շատ հարուստ մարդու, այն է՝ Եղիաբար Փուլչատեանի որդու, Սամուէլի հետ։ Վերջինս մի քանի դէպքերում տեսնելով Սալօմէի արտաքոյ կարգի խորամանկութիւնը և ճարպկութիւնը—իւր սիրած գործերում, ընտրեց նրան իւր համար մշտական զուարճութեանց մատակարար ամսական որոշ թոշակ կապելով նրա համար։ Այսպիսով Սալօմէն պարտաւոր էր քաղաքի մէջ լոյս ընկնող ամեն մի գեղեցկուհու մասին տեղեկութիւններ տալ երիտասարդ Փուլչատեանին թէ արդեօք ո՞վ և որտեղացի է այդ գեղեցկուհին, ինչ պաշտպաններ ունի, ինչո՞վ կարելի է նրան ձեռք բերել—ասկո՞վ թէ ուրիշ միջոցներով և այս ամենը ստուգելուց յետ ծանօթացնել և բարեկամացնել նրան Սամուէլի հետ . . . ։

Դրբացութիւնը և զանազան հմայութիւնները, որոնք մինչև այն Սալօմէի համար միակ ապրուստի միջոցներ էին, այժմ ծառայում էին նրան իբր մի ուսկան, որի մէջ անխտիր բռնվում էին թէ խեղճ ծնողաց աղջիկները, թէ անպաշտպան որբուհիները և թէ նոյն իսկ և հարստութիւն և պաշտպանութիւն վայելող գեղանիները։

Հարկ չկայ ասել որ զուարճասէր Փուլչատեանը այս բազմակնութեան համար ոչինչ չէր խնայում այն մեծ հարստութիւնից, որը դիզել էր իւր հայրը ճ ա կ ա տ ի ք ր տ ի ն ք ո վ, ինչպէս նա միշտ սովոր էր ասել։ Եւ Սալօմէն իւր սիրած գործերի մէջ երևան եկող դժուարութիւններն և արգելքները յաղթելու համար ամեն միջոց առձեռն ունէր. որովհետև իւր երիտասարդ պարոնի մօտ վայելում էր անսահման վարկ և հաւատարմութիւն։

Զուարճութեան մի ,,առարկան՛՛ ձեռք բերելուց յետ՝ խորամանկ պառաւը խոկոյն և եթ սկսում էր որոնել մի ուրիշը, որովհետև այնպէս էր հրամայուած իւր երիտասարդ պարոնից, որը շատ սիրում էր փոփոխութիւնները... Իսկ այդ ,,ուրիշը՛՛ գտնելուց յետոյ նա պարտաւոր էր հեռամօտ լինել ,,երրորդին՛՛ և այսպէս շարունակ։

Նախընթաց գլխում Սալօմէի մօտ գիշերով այցելող երիտասարդի յանձնարարութիւնը նոյնպէս վերաբերում էր այս ,,ուրիշներից՛՛ կամ ,,երրորդներից՛՛ մինին։

(Կը շարունակուի)։

ու նշանակութիւնը...

Երեւանը հարուստ է և տպարաններով և պարբերական հրատարակութիւններով: 3 տպարան կայ—որ մէկ չ'արժենա: „Պսակ" շաբաթաթերթը չորս տարի հրատարակուելուց յետոյ հարկադրուեց դադարել: Օրերումս դուրս եկաւ հինգերորդ տարուայ առաջին համարը: *) „Առողջապահական Թերթը" դեռ ևս հրատարակվում է քայքայուած առողջութեամբ, ոչինչ կամ քիչ յոյս տալով թէ գալ տարիներում ևս կարող պիտի լինի պահպանել իւր կեանքը—թէև հրատարակողն ու տէրը բժիշկ է: Երկրորդ տարին է ինչ հրատարակվում է շաբաթը 3 անգամ „Երևանի Յայտարարութիւններ" քառորդ թերթը: Երևանցիք յայտարարութիւններ շատ քիչ են սիրում, եղածն էլ առաւել տ ն տ ե ս ո ւ թ ե ա ն են համարում կրկնապատիկ եւպատիկ ծախս անել—առանձին թերթի վրայ տպագրել ու պատերին կպցնել քան թէ թերթի տալ: Այս է պատճառը որ յիշեալ թերթը հարուստ է առաւել լուրերով ու անեկդոտներով քան թէ յայտարարութիւններով: „Հայոց օրացոյցների խմբագիր" միայն Արգար Ստեփաննոսեան Գուլամիրեանցի սեպհական տան սեպհական տպարանում տպող սեպհական օրացոյցներն են չկէրք ընկածի պէս բարակ մանում և դեռ ևս շատ տարիներ „մանել" են խոստանում: Խորհուրդ կը տանք ամենքին էլ „օրացոյցներ" հրատարակել, թէ չէ Երևանում ուրիշ բաները առաջ չեն գնայ: **)

Զլնուոր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Խոլերան հետազօտելու համար Ֆրանսիա ուղարկուած գերմանական կոմիսար բժիշկ պրօֆէսոր Կօխը Տուլոնում խօսակցութիւն ունեցաւ „Times"

*) Ձեր քաղաքում տարին քանի՜ ամսից է բաղկացած: Խմբ.

**) Խնդրում ենք, որ միւս անգամ թղթակցութիւնը աւելի կարճ գրէք, և յոյս ունենանք որ ձեր դիտողութիւններն այդտեղի գործերի և անձինքների վերաբերութեամբ ճշմարտութիւնն են բովանդակում իրենց մէջ: Խմբ.

թերթի այնտեղի թղթակցի հետ և նրան հետևեալ կարծիքներն հաղորդեց, որոնք բոլորովին համաձայն են Բերլինում նրա յայտնածների հետ: Նա դրականապէս համոզուած է, որ այժմեան ժանտախտը իսկական ասիական խոլերան է: Այդ բանում նրա հետ համաձայն են Տուլոնի բոլոր բժիշկներն:

Ինչ վերաբերում է այդ ախտի ծագումին, պէտք է ասել, որ ոչինչ տարակուսանք կարելի չէ լինել այն մասին, որ նա բերուած է հեռու արևելքից: Պրօֆէսոր Կօխը կարծում է, որ խոլերան ամեն տեղ կը գնայ, որովհետև եթէ այդ տարափոխիկ ցաւի կենդրոնն այժմս Տուլոնն է, նա անպատճառ պէտք է որ տարածուի: Այս մաքով նա ցեխուցումն կ'ուղարկէ Գերմանիա:

—

Փարիզից հեռագրում են Բերլինի լրագիրներին, որ Ֆրանսիական զօրքերի Ֆօրմօզա կղզու գրաւման կարելիութիւնը այնքան վրդովում է Անգլիային, որ Վադինգտոնի Փարիզ գնալը զերծ չէ մասամբ և այս հանգամանքից, ըստ որում Ֆրանսիական դիպլօմատի կարծիքով Չինաստանի հետ գէնքով դիմահարութիւնը կարող է անյաջող ներգործութիւն ունենալ Եւրոպայի այժմեան տրամադրութեան և նրա սրանից յետոյ Ֆրանսիայի հետ ունեցած յարաբերութեան վրայ:

—

Լրագիրների խօսքին նայելով Մարօկկօի գործը խաղաղութեամբ վերջացրած է համարվում, որովհետև այդ գործով հետաքրքրուող պետութիւններն համոզուել են, որ Ֆրանսիայի համար այդտեղ միմիայն սահմաններն ուղղելու խնդիր կայ և նա ուրիշ աշխարհակալական դիտումներ չէ ունեցել:

—

Լօնդօնից հեռագրում են „Gaulois" թերթին, որ Վադինգտոնի յանկարծակի Փարիզ մեկնելը ցոյց է տալիս, որ կօնֆերէնցիայում մեծ դժուարութիւններ են ծագել: Մէկ կողմից Անգլիան և Իտալիան, միւս կողմից—Ֆրանսիան, Թիւրքիան, Աւստրիան և Գերմանիան ունին Եգիպտոսի վերաբերութեամբ իրենց սեպհական դիտումները, որոնց ձգտում են ուրիշ մտադրութիւններից առաջ ձգել: Այստեղ խօսքը կարող է վերաբերել եգիպտական գործերի միմիայն քաղաքական կողմի վրայ, վասն զի Ֆինանսական խնդիրների քննութիւնը յանձնուած է ամբողջապէս կօնֆերէնցիայի կից կազմած Ֆինանսական մասնաժողովին:

Դիպլօմատիկական շրջաններում նախատեսնում են, որ եւրոպական տէրութիւնների խորհրդակցութիւնը կամաց ակամայ քաղաքականի կը փոխուի, ըստ որում Եւրոպան ամենևին չէ հետաքրքրվում եգիպտական Ֆինանսների դրութիւնով, այլ անհամբերութեամբ ցանկանում է գիտենալու թէ ինչպէս պիտի կազմակերպուի Եգիպտոսի վրայ միջազգային հոգաբարձութիւնը և ինչ միջոցների կը ձեռնարկէ կօնֆերէնցիան, կարգը և խաղաղութիւնը վերականգնելու համար Եգիպտոսի հովիտում:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4 յուլիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կառավարչական քննողական յանձնաժողովը, որը հիմնուած է օգոստոսի 1-ից 1868 թ. մինչև 1883 թ. յունուարի 1-ը Նիկողայոսեան երկաթուղու գլխաւոր ընկերութեան դրամական շրջանները քննելու համար, վերջացրեց իւր գործողութիւններն:

„Нов Вр." հաղորդում է, որ գաղթականութեան կարգադրութեան մասին նախագիծը կը մտցնուի Պետական խորհուրդը առաջիկայ ժողովքների սկզբներում. իսկ մինչև հարցի վճռելը միջնորդութիւն է արուած 40 հազար րուբլի օժանդակութիւն տալ գաղթականներից աւելի կարօտեալներին:

Լուր է տարածուած, թէ ենթադրութիւն կայ օֆիցերներին, որոնք պատերազմական և այլ մինիստրութիւններում կանցելարիական պաշտօններ են վարում, քաղաքական աստիճանների վերափոխել. միմիայն այս օրէնքը չէ վերաբերում գնդապետներին և գեներալներին:

ԲԵՐԼԻՆ. Ֆրանսիական դեսպանը Բերլինում իւր կառավարութեան կողմից ցաւակցութիւն յայտնեց Փարիզում դէպի Գերմանիան տեղի ունեցած թշնամական ցոյցերի մասին:

ՓԱՐԻԶ. Պարլամենտը միահամուռ հաստատեց $2^1/_2$ միլլօն Ֆրանկի պահանջը խոլերայից վնասուածների օգտին:

ՄԱՐՍԷԼ. Այստեղ ժամանեցին ներքին գործերի, վաճառականութեան և հասարակական աշխատանքների մինիստրները: Պրեֆեկտը (նահանգապետ) հաղորդեց, որ 65,000 բնակիչներից աւելի թողել են քաղաքը և թէ բանուորների դասին անգործութիւն է սպառնում:

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ. Քաղաքական կառավարութիւնը վճռեց խոլերայի դէմ նախազգուշութեան միջոցներ գործ դնելու համար 10,000 Ֆինական մարկ նշանակել, իսկ եթէ խոլերան երևայ՝ աւելացնել այդ գումարը:

ԼՕՆԴՕՆ. Ֆրանսիական դեսպանը պահանջեց Չինաստանից հեռացնել չինական զօրքերը Տօնկինից և վճարել վարձատրութիւնը. բայց չինական բարձրագոյն խորհուրդը բացասեց այդ պահանջը. ըստ երևոյթին պատերազմը անխուսափելի է:

ՓԱՐԻԶ. Յուլիսի 2-ին (14) տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով, ոստիկանական կոմիսարը հրաժարեցրած է: Սենատի յանձնաժողովը կարգադրեց սահմանադրութեան 8-րդ յօդ. քննութեան ենթարկել, որ վերաբերում է սենատի Ֆինանսական գործերում ունեցած իրաւունքներին. երկու պալատներն էլ կանգրէս կը գումարուին հոկտեմբերից ոչ առաջ:

Տուլօնում խոլերայից մեռան 29 մարդ և Մարսէլում—50:

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԼԻ ՄԵԿ ՋՈՀ
ԿՕՄԵԴԻԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ
Հեղինակութիւն
Գ ա բ ր ի է լ Ս ո ւ ն դ ո ւ կ ե ա ն ց ի
գինն է 1 րուբլի.
Վաճառվում է Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՎԱՐԺԱՐԱՆԻ"
№ 6.
ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Ժառանգականութիւն կրթութեան համեմատութեամբ. — Ս. Մ ա ն դ ի ն ե ա ն.—Այժմեան դպրոցական կրթութեան վնասները.—Փ. Վ ա ր դ ա ն ե ա ն.—Ուսուցչի կոչումը. Կ ո ւ ր տ մ ա ն ի,—Թարգ. Ա. Ս ա լ ա ր ա պ ե տ ե ա ն.—Դասաւանդութիւն.—Մ. Շ ա է ր ն է ր ի. Թարգ. Գ. Շ ա հ բ ո ւ դ ա ղ ե ա ն.—Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն' բնական գիտութեանց ունեցած յարաբերութիւնը գիտութիւնների ամբողջութեան հետ. Ճառ. պրօֆ. Հ. Հէլմհօլցի,—Թարգ. Աբիսողոմ Յովհաննիսեան. Այլ և այլք.—Յայտարարութիւններ.

Խմբագիր—Հրատար. Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԶԻՆԳԵՐԻ
Նիւ-Եօրկում



ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ, ՄԻՐԻՄԱՆՕՎԻ ՏԱՆԸ
ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ
Որը արժանացել է Ամստերդամի համաշխարհական հանդիսին 1883-ին
Միակ ամենաբարձր պարգևը պատուաւոր դիպլօմ

Մօտ օրերում տասնայ մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր գործիքներով և նոր ոտերով, որոնք առանց աղմուկի թեթևութեամբ բանում են, այնպէս, որ ամենաթոյլ մարդիկ և ծերունիներն անգամ, առանց ոյժ գործ դնելու կարող են գործածել: Այս մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում: Սա ամենալաւ ապացոյցն է թէ ինչ լաւ յատկութիւն ունին ԶԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ:

Ն ա խ ա զ գ ո ւ շ ո ւ թ ի ւ ն. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ համբաւ ունին, որովհետև իրեն գեղեցիկ յատկութիւններով և ամրութեամբը զմայլեցնում են ամենքին և հենց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրեր կեղծում են և Զինգերի իսկական մեքենայի անունով ծախում: Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Զինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Զինգերի» ֆիրման մեքենայի կոճի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները: Զինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակամիջոց տտանել դրամը վճարելու համար, առանց անսակի գինը բարձրացնելու: Հին մեքենան մաղազինում կարելի է փոխել: Մեքենաները ունին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. առեղներ, թել, մետաքս, մեքենայի իւղ և այլն և այլն:

ԹԻՖԼԻՍ, Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

Բ ա ժ ա ն ո ւ մ ն ե ր. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Չէրէկօվի, բուլվարի հանդէպ: ԲԱԳՈՒԻ մէջ, Միքայէլեան փողոց, տուն Միրզա-Աւագովի: ԲԱԹՈՒՄ, Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի: Այս մեքենաների մշտական պահեստներ գտնվում են նաև Ղարս, Ելիսաւէտապօլ, Ալէքսանդրապօլ, Շուշի, Պետրովսկ և Ախալցխա քաղաքներում,

50—8

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Іюля 1884 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12.